

## Անոթավոր բույսերի և մամռակերպերի նույնականացումն ու մոնիթորինգը

### Ընդհանուր ակնարկ

Անոթավոր բույսերի և մամռակերպերի կյանքի ցիկլը մեծապես սեզոնային կախվածություն ունի: Որոշ տեսակներ կարելի է նույնականացնել կլոր տարին, այնուամենայնիվ, դրանք սովորաբար հաշվառվում են աճելու ամիսներին, օրինակ՝ գարնանից մինչև խոր աշուն, երբ տեսակին բնորոշ ֆիզիոլոգիական հատկանիշներն ակնհայտ են դառնում: Չնայած անոթավոր բույսերը և մամռակերպերը «նստած» (ստիպացիոնար) օրգանիզմներ են, դրանք կարող են իրենց սերմերը և սպորները տարածել օդային հոսանքների միջոցով, ինչը ենթադրում է, որ հաշվառումները պետք է ընդլայնել՝ դրանք կատարելով այնպիսի հավանական միջավայրերում (աճելավայրերում), որոնք շրջապատում են տեսակների հայտնի տարածքները:

Վերջերս ԴՆԹ-ի (այդ թվում՝ շրջակա միջավայրից վերցվող ԴՆԹ-ի) վրա հիմնված մոլեկուլային մեթոդների հարցում գրանցված առաջնադաս մանրէի մոնիթորինգի հիման վրա տեսակների (պոպուլյացիաների, առանձնյակների) նույնականացումը ծախսարդյունավետ է դարձել: Վերջինս կարող է լուծում հանդիսանալ երկու միանման բարդ տեսակների կամ ենթատեսակների նույնականացման համար՝ չափազանց փոքր վնաս հասցնելով տեր-բույսին կամ մամռակերպերին:

Նմուշներ հավաքելիս համապատասխան տեղեկություններ պետք է ներառել նմուշի պիտակում:

Պիտակում նշված տվյալներին ներկայացվող նվազագույն պահանջները ներառում են ժամը, տեղանքը (նախընտրելի է ԳՏՀ (GPS) կոորդինատները) և հավաքողի անունը: ԳՏՀ կիրառմամբ պետք է նաև նշել պոպուլյացիայի (նպատակահարմար միջավայրի) սահմանները: Այնուհետև այս նմուշները պետք է պահել հանրային հերբարիումում (օր.՝ որևէ համալսարանում), իսկ նմուշի վերաբերյալ տեղեկությունները պետք է մուտքագրել բաց հասանելիությամբ տվյալների շտեմարանում (նախընտրելի է, որ վերջինս փոխկապակցված լինի «Կենսաբազմազանության համաշխարհային տեղեկատվական կազմակերպությանը» (GBIF)): Անհրաժեշտ է հիշել, որ նմուշառման հետևանքով չպետք է սպառնալիք առաջանա տեղական որևէ պոպուլյացիայի գոյության համար:

Անոթավոր բույսերի և մամռակերպերի հաշվառումն ու մոնիթորինգը պետք է հիմնվեն անոթավոր բույսերի և մամռակերպերի համար նախատեսված՝ դաշտային դիտարկման թերթիկների վրա: Վերջիններս մի քանի տասնամյակ շարունակ որպես հաշվառումների և մոնիթորինգի հիմնական մեթոդ են կիրառվել անհետացման եզրին գտնվող տեսակների վերաբերյալ ֆիննական տվյալների շտեմարանի դեպքում:

### Անոթավոր բույսեր

Անոթավոր բուսատեսակների նույնականացման և մոնիթորինգի հիմնական մեթոդն աճի սեզոնին ծաղկող առանձնյակների ակտիվ որոնումն է: Որոշ տեսակների դեպքում դա կարող է շատ վաղ լինել, օրինակ՝ մարտ ամսին, սակայն որոշ տեսակներ կարող են ավելի ուշ ծաղկել, օրինակ՝ հոկտեմբեր ամսին: Որոշ տեսակներ կարելի է նույնականացնել առավել երկար ժամանակահատվածում հասած սերմնատուփի կամ այլ

կառուցվածքային առանձնահատկության շնորհիվ, մինչդեռ որոշ տեսակներ ներկա և նույնականացման ենթակա են միայն կարճ ժամանակահատվածով վերջիններիս աճի սեզոնին:

Անոթավոր բույսերի մեծ մասը կարող է նույնականացվել լուսանկարների միջոցով: Այնուամենայնիվ, սխալ նույնականացման ռիսկի առկայության պարագայում (ինչը երբեմն տեղի է ունենում հացազգիների և կնյունազգիների և երկու միանման բարդ տեսակ ներառող բույսերի դեպքում) կարևոր է փոքր նմուշ վերցնել, որը պետք է ունենա տեսակին հատուկ բոլոր առանձնահատկությունները և բավարար տեղեկություններ պարունակի:

Անոթավոր բույսերի պարագայում երբեմն հնարավոր է լայն հանրությանը ներգրավել հաշվառման և մոնիթորինգի աշխատանքներում՝ բույսերի լուսանկարների համար նախատեսված թվային հարթակ տրամադրելու միջոցով: Այս այսպես կոչված «քաղաքացիական գիտությունը» կարող է օգնել հեշտ տարբերակվող տեսակների հաշվառմանն ու մոնիթորինգին:

Լուսանկար՝ Tulipa confusa  
Լուսանկարը՝ Յ. Խլապեկի

## Մամռակերպեր


Մամռակերպերի նույնականացման և մոնիթորինգի հիմնական մեթոդը ակտիվ որոնումն է: Լուսանկարահանումը կարող է կիրառվել միայն սահմանափակ թվով հեշտ նույնականացվող տեսակների նույնականացման համար: Մամռակերպերի պարագայում անհրաժեշտ է որոնվող (նույնականացվող) տեսակների էկոլոգիայի վերաբերյալ պատշաճ գիտելիքներ ունենալ: Մամռակերպերի տեսակների (հատկապես նոր տեղանքերում) մեծ մասի պարագայում կարևոր է հերքարիումի համար նախատեսված նմուշներ հավաքել և դրանց մասին պատշաճ տեղեկություններ պարունակող պիտակներ պատրաստել:

## Անոթավոր բույսի դեպքի ուսումնասիրություն

### Կնճիթաթերթիկ սապափավոր (Rhinopetalum gibbosum)

ԲՊՄՄ (IUCN) կարգավիճակը Եվրոպայում - Իրավական կարգավիճակը ԵՄ-ում - ԲՊՄՄ Կարգավիճակը Հայաստանում՝ ծայրահեղ վտանգված (CR) (ըստ ՀՀ կարմիր գրքի)

Ինչպես հաշվառել և մոնիթորինգ կատարել՝ Ակտիվ որոնում  
Երբ հաշվառել և մոնիթորինգ կատարել՝ ծաղկման փուլում՝ մարտից ապրիլ, պտղաբեր փուլում՝ մայիսից հունիս



Կնճիթաթերթիկ սապափավոր (*Rhinopetalum gibbosum*)  
Լուսանկարը՝ Յ. Խլապեկի

## Մամռակերպի դեպքի ուսումնասիրություն

### Բուկսբաումիա կանաչ (Buxbaumia viridis)

ԲՊՄՄ կարգավիճակը Եվրոպայում - քիչ մտահոգող տեսակ (LC)  
Իրավական կարգավիճակը ԵՄ-ում - ԵՄ միջավայրերի վերաբերյալ իրահանգ՝ Հավելված II, Բեռնի կոնվենցիա՝ Հավելված I  
ԲՊՄՄ Կարգավիճակը Հայաստանում -

Ինչպես հաշվառել և մոնիթորինգ կատարել - ակտիվ որոնում  
Երբ հաշվառել և մոնիթորինգ կատարել - կլոր տարին



Բուկսբաումիա կանաչ (*Buxbaumia viridis*). Լուսանկարը՝  
Բերնդ Հեյնսլոֆի, Վիքիմեդիա